Հաստատում եմ

Տնօրեն՝ /Ա.Վարդանյան/

29.11.2023թ.

Հաշվետվություն

2023-2024 ուստարի I կիսամյակի VII դասարանի
«Հայոց պատմություն» առարկայի
Թեմա՝ «Հայոց ծագումնաբանությունը ըստ օտար
ավանդազրույցների» ուսումնական նախագծի

Ուսուցիչ՝ Գ. Մելիքյան

Հաշվետվություն

2023-2024 ուստարի I կիսամյակ VII դասարան
«Հայոց պատմություն» առարկա
Թեմա՝ «Հայոց ծագումնաբանությունը ըստ օտար ավանդազրույցներ» ուսումնական նախագծի

VII դասարանի 5 սովորողների կողմից ընտրված և մեթոդական մասնախմբի կողմից հաստատված ուսումնական նախագիծը իրականացվել է 2023 թ. Հոկտեմբեր- նոյեմբեր ամիսներին՝ նրանց մասնակցությամբ:

Նախագիծը նպատակ ունի VII դասարանի սովորողներին

Ներկայացնել՝

- Ներկայացնել՝ հայ ժողովրդի բնիկ, հնագույն ազգ լինելու հանգամանքը;
- հայերի ծագման մասին պատմող օտար ավանդազրույցները:
- Ձևավորել՝ պատմական տվյալներ հավաքելու, դրանք քննադատական հմտությամբ վերլուծելու կարողություն;
- Զարգացնել մեդիագրագիտությունը, այն է՝ տեղեկատվության սկզբնաղբյուրներից օգտվելու, անհրաժեշտ նյութն ընտրելու կարողությունները :

Գնահատել՝

Գնահատել՝

✓ հայ ժողովրդի բնիկ, հնագույն ազգ լինելու հանգամանքը

Ձևավորել՝

- ձևավորել հմտություն՝ հետազոտական տարբեր մեթոդների կիրառմամբ, ինչը նրանց հնարավորություն կտա մեկնաբանել հայ ժողովրդի ծագման ու կազմավորման մասին ճշգրիտ տեղեկությունները:

Խնդիրները

- Աշակերտներին մոտիվացնել սովորելու համար,խնդիրների տարբեր լուծումներ առաջարկելով բացահայտել և ավելի հեշտ յուրացնել թեման:
- հիմնավորել և փաստարկել հայերի ծագման տեղաբնիկության տեսության, Հին Արևելքի սեպագիր սկզբնաղբյուրների և Աստվածաշնչում Հայաստանի և հայերի մասին վկայությունների, հայկական, հնագույն միջագետքյան հունական և վրացական ավանդազրույցների վերաբերյալ տեղեկությունները:
- Վերլուծության հիմքում ընկած է *անցյալի սկզբնաղբյուրների մեկնաբանությունը:*
- Հնդեվրոպական նախահայրենիքը գտնվում է Հայկական լեռնաշխարհում, Փոքր Ասիայի արևելյան, Միջագետքի հյուսիսային և Իրանական սարահարթի հյուսիսարևմտյան շրջաններում: Հայերը հնդեվրոպական ժողովուրդներից միակն են, որի ծագումն ու կազմավորումը տեղի է ունեցել հնդեվրոպական նախահայրենիքի տարածքում, հետևաբար հայերը Հայկական լեռնաշխարհի բնիկ տերերն ու ժառանգորդներն են:

Նախագծի կարողունակահեն մոտեցումը կազմակերպվել է այնպես, որ սովորողների մոտ ուսումնառության գործընթացում ձեռք բերված գիտելիքները, ձևավորված կորողունակությունները, հմտությունները, արժեքներն ու դիրքորոշումները հնարավորինս կիրառվեն առօրյա կյանքում, տարբեր իրավիճակներում սովորողները կարողանան արագ և արդյունավետ կողմնորոշվել, արձագանքել ,առաջարկել համապատասխան լուծումներ: Ուսումնառության գործընթացում սովորողների մոտ վերոնշյալ կարողունակությունները կարող են ձևավորվել ու զարգանալ ուսուցման կազմակերպման տարբեր ձևերի, գործունեության տեսակների, տեխնոլոգիաների, մեթոդների կիրառման արդյունքում:

Նախագծային աշխատանքներն օժանդակում են առարկայական չափորոշիչներով սահմանված ծրագրային բովանդակության համակարգված յուրացմանը, զարգացնում են երևակայությունը, քննադատական և ստեղծագործական մտածողությունը, հաղորդակցման հմտությունները, մարզում են հիշողությունը:

Նախագծում առաջադրված հարցերն ու առաջադրանքները նպաստում են սովորողների համեմատելու, հակադրելու, վերլուծելու, կարծիք հայտնելու , փաստարկելու և հիմնավորելու, ինքնուրույն եզրահանգումներ անելու, գնահատելու և արժեվորելու և այլ կարողությունների ձևավորմանը, ինչպես նաև օգնում են կապեր գտնել տվյալ ժամանակաշրջանի և արդի իրողությունների ու իր կյանքի միջև:

Նախագիծի վերջնարդյունքներով սովորողը պետք է՝

Ներկայացնի

Միջագետքի ու Սիրիայի տարածքներից հայտնաբերված սեպագիր արձանագրություններում նշվածը, որ Հայաստանը համարվում է ,,Աստվածների սուրբ օրենքների երկիր,, ,,Անմահության երկիր,,,որտեղից տարահանվել են իմաստությունն ու արվեստը:Հնագույն զրույցների համաձայն Արեգակի կացարանը գտնվում էր Վանա լճի հատակին:

Բացատրի և վերլուծի հայ ժողովրդի ինիկ լինելու և հնդեվրոպական լեզվաընտանիքին պատկանելու վերաբերյալ փաստերը

Համեմատի հայերի ծագման մասին պատմող ավանդազրույցները

Թիմով ուսումնասիրեն և վերլուծեն զանազան պատմական աղբյուրներ և տեքստեր՝ ձևավորելով համագործակցային հմտություն:

Կառուցեն հնդեվրոպական լեզվաընտանիքի տոհմածառը

Կատարված աշխատանքի նկարագիր

Նախագծային աշխատանքը կազմակերպվել է «Հայոց ծագումնաբանությունը ըստ օտար ավանդազրույցներ» թեմայով՝ուսումնական նախագծի պլանի հիման կազմված թեմատիկ պլանավորման հիման վրա: Կազմվել է աշակերտների հետ արտադասարանային հանդիպումների հաճախումների և կատարած աշխատանքները բնութագրող ու բովանդակող մատյան : Հանդիպումների ժամանակ՝

Աշակերտների հետ քննարկման արդյունքում

1/ իրականացվել է մի քանի թեմաներից մեկի ընտրությունը,

2/ ընտրվել է այնպիսի հիմնախնդիր կամ ձևակերպել այնպիսի հիմնահարց, որը թույլ կտա տարբեր դիրքերից, տարբեր պատմական գործիչների և սոցիալական դերերի և առօրեականության տեսանկյունից հանգամանորեն վերլուծել այն,

3/ սահմանվել են այնպիսի ուղղություններ, որոնք հնարավորություն են ընձեռում բացահայտել, թե ուսումնասիրվող ժամանակահատվածում, կոնկրետ իրավիճակում կամ իրադարձության ժամանակ աշխարհաքաղաքական ինչ իրադարձություններ են տեղի ունեցել, որքանով են հարևան պետությունների հետ հայ ժողովրդի փոխհարաբերությունները կայուն կամ անկայուն եղել, ինչ ազդեցություն է թողել հայ ժողովրդի վարած արտաքին քաղաքականությունը պետականության ձեռքբերման կամ վերջինիս կորստի համար, պետությունները ինչ նպատակներ , շահեր, ցանկություններ, զգացողություններ, մտադրություններ և կողմորոշումներ են ունեցել, նրանց գործունեության արդյունքում ինչ հաջողություններ, ձեռքբերումներ են արձանագրվել, նրանք ինչ անհաջողություններ, սխալներ և բացթողումներ են ունեցել:

4/ հստակեցվել է նախագծային աշխատանքի ուսումնասիրման ժամանակահատվածը, որը, կախված նպատակից, նպատակահարմար էր իրականացնել 5 դասաժամում ,

5/ աշակերտների հետ հստակեցվել է նախագծային աշխատանքի ներկայացման կառուցվածքը և ձևաչափը, այսինքն՝ աշվի առնելով ներկայացվող ժամանակաշրջանի առանձնահատկությունները, բովանդակության ծավալը և այլ հանգամանքներ, աշակերտների կողմից ներկայացման ձևաչափը, նրանց յուրաքանչյուրի խոսքին հատկացվող առավելագույն և նվազագույն ժամանակը, ինչպես նաև օգտագործվող տեղեկատվական տեխնոլոգիաների ձևաչափերը ներկայացման սկզբում , ընթացքում և ավարտին, աշակերտների խոսքի շրջանակը, ծավալը, դրան հատկացվող ժամաքանակը և այլն,

6/ սովորողների միջև հետազոտական աշխատանքի բաժանում,ըստ որի՝ հետազոտական աշխատանքը տրոհել ենք բաժինների և , ըստ սովորողների ցանկության, ընտրել ենք թեմաները, որոնք հետազոտելու և որոնցով զարգացնելու են իրենց հմտություններն ու կարողունակությունները, ընտրվել է հետազոտության անցկացման ձևաչափերը, կատարվել է աշխատանքի բաժանում, նախագծային աշխատանքի ներկայացման մեթոդներ և ձևաչափերի ընտրություն,

7/ կատարվել է սկզբնաղբյուրների ընտրություն, աղբյուրների տրամադրում և անհրաժեշտ նյութերի քննարկում :

8/Մշակվել են հարցեր՝ հետազոտության համար.

- Հայ ժողովրդի ծագման ու կազմավորման հարցը,
- Որտեղի՞ց է ծագում մեր ժողովուրդը,
- Ո՞րն է նրա բնօրրանը,
- Ե՞րբ է ձևավորվել իբրև ինքնուրույն էթնիկ միավոր
- Ո՞ր ժամանակներից է հիշատակվում հնագույն գրավոր հուշարձաններում

9/ ստուգվել են հավաքագրված նյութերը: Ստուգվել են թղթային կամ էլեկտրոնային տարբերակով ներկայացված նյութերը, աշխատանքային պատկերները, նկարները, կատարվել են սղագրումներ , սխալների ուղղում, քննարկում:

10 / Սահմանվել են միավորային և ձևավորող գնահատման չափանիշներ :

Ընթացքը – 6 միավոր, ընդ որում՝

- նախապատրաստական փուլ (թեմայի ընտրություն, նպատակի սահմանում, դերերի բաշխում՝ եթե խմբային է) - 1 միավոր
- բուն ընթացք (խնդիրների ձևակերպում, հարցերի մշակում, պլանի կազմում, ժամանակի բաշխում, ռազմավարությունների ընտրություն, աղբյուրների ուսումնասիրում, տեղեկության հավաքագրում և վերլուծություն) - 4 միավոր
- ավարտ կամ ամփոփում (վերջնական մշակում, աշխատանքի ձևավորում) - 1 միավոր

- *Բովանդակությունը* – 8 միավոր, ընդ որում՝

- համապատասխանությունը թեմային - 3 միավոր
- ամբողջականությունը - 2 միավոր
- հիմնավորվածությունը - 2 միավոր
- գրագիտությունը - 1 միավոր

- *Ներկայացումը* – 6 միավոր, ընդ որում՝

- ձևը/միջոցը (սահիկաշար)- 3 միավոր
- խոսքը - 3 միավոր

11/ Կազմակերպվել է նախաներկայացում, որի ժամանակ՝

- սովորողներին տրամադրվել է տեսասահիկի կազմման տեխնիկական աջակցություն,
- սովորողների միջև կատարվել է տեսանյութի պատրաստման և ներկայացման ընտրություն (Սարգսյան Ցողիկ, Զաքարյան Հայկ),

-աշխատանքի ներկայացման խոսքի և կեցվածքի նախնական ստուգում,

12/ Կազմակերպվել է նախագծի պաշտպանություն, այսինքն՝ հիմնական ներկայացման փուլում սովորողները վերջնականացրեցին նախագծային աշխատանքի վերաբերյալ իրենց խոսքը և ներկայացրեցին այն: Կարևոր է, որ սովորողներն իրենց ներկայացման ժամանակ ազատ էին զգում, կարողանում էին տարբեր ուղղություններով վերլուծեն և ըստ անհրաժեշտության՝ մեկնաբանել այն: Քննարկումը իրականացվեց անկաշկանդ մթնոլորտում, սովորողների արտահայտվելու ընթացքում ուսուցիչը և դասընկերները անհարկի չմիջամտեցին պաշտպանությունը, ուսուցիչը և դիտորդները, ըստ ուսուցչի կազմած չափանիշների , հետևում էին ներկայացման ընթացքին և կատարում համապատասխան նշումներ: Քննարկումը իրականացվել է անկաշկանդ մթնոլորտում՝ սովորողների արտահայտվելու ընթացքում ուսուցիչը, դասընկերները և մյուս ներկաները ուշադիր հետևում էին նախագծի պաշտպանությանը:

13/ ապահովվել է անդրադարձի փուլ, այսինքն՝ նախագծի ներկայացման ավարտին իրականացվել է ամփոփում, որն ի կատար է ածվել տարբեր ձևաչափով:

-Հարց ու պատասխանի

-համախմբային քննարկման

-տեսանյութ դիտելու

-մի քանի սովորողների կողմից վերլուծության

14/ իրականացվել է գնահատում, որը կազմակերպվել է աշակերտների և ուսուցչի հետ համատեղ: Գնահատման արդյունքում հաշվի են առնվել նաև մասնախմբի ներկա անդամների կարծիքները և տեսակետները:

Ազգանուն, անուն	միավոր	գնահատական
Աբրահամյան Շուշանիկ	16	8
Զաքարյան Հայկ	18	9
Սարգսյան Լիա	16	8
Սարգսյան Ցողիկ	18	9
Վասիլյան Ալեն	12	6

Այսպիսով՝ սույնով հաշվետվությամբ նկարագրվում են աշակերտների կողմից ձեռք բերված այն կարողունակություններն ու հմտությունները, որոնք վեր են լուծվել անդրադարձի փուլում: Նախագծային աշխատանքն օժանդակել է առարկայական չափորոշիչներով սահմանված «Հայրենագիտության» ծրագրով «Հայոց ծագումնաբանությունը ըստ օտար ավանդազրույցների» թեմայի բովանդակության համակարգված յուրացմանը, զարգացրել է երևակայությունը, քննադատական և ստեղծագործական մտածողությունը, հաղորդակցման հմտություններին և հիշողությանը: Նախագծում առաջադրված հարցերն ու առաջադրանքները նպաստել են սովորողների համեմատելու, հակադրելու, վերլուծելու, կարծիք հայտնելու , փաստարկելու և հիմնավորելու, ինքնուրույն եզրահանգումներ անելու, գնահատելու և արժևորելու և այլ կարողությունների ձևավորմանը, ինչպես նաև օգնել են կապեր գտնել տվյալ ժամանակաշրջանի և արդի իրողությունների ու իր կյանքի միջև: Ուսումնառության գործընթացում սովորողների մոտ վերոնշյալ կարողունակությունները ձևավորել ու զարգացել են ուսուցման կազմակերպման տարբեր ձևերի, գործունեության տեսակների, տեխնոլոգիաների, մեթոդների կիրառման արդյունքում:

Առաջարկում եմ

Առավել մեծ ուշադրություն դարձնել սովորողների խոսքի և բանավոր ներկայացման մշակույթին, քանզի նախագծային աշխատանքը ներկայացնելիս սովորողների մոտ նկատվում էր կապակցված խոսքի և մտքերի ոչ դյուրին արտահայտչականություն, ձայնային ավելորդ հնչյուններ, որոնք խանգարում էին բանավոր խոսքի հստակությանն ու կայունությանը:

Ուսուցիչ՝ Գ. Մելիքյան